

Luys Lnyu®



ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ
ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ
ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐ-ԱՊՐԻԼ ԱՄԻՍՆԵՐԻՆ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ	1
1.1. Արդյունաբերություն	2
1.2. Շինարարություն	3
1.3. Ծառայություններ	4
1.4. Առևտուր	5
2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ	5
3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ	7
4. ՓՈԽԱՐԺԵՔ	8
5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ	9
5.1. Պետական պարտք	9
6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ	10
6.1. Գնաճ	10
6.2. Ավանդներ	11
6.3. Վարկեր	12
6.4. Դրամական փոխանցումներ	14
7. ԱՄՓՈՓՈՒՄ	15

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ

2023 թվականին ՀՀ տնտեսությունը կրում է նախորդ տարվա բարձր աճ ապահոված գործոնների շարունակվող ազդեցությունները, որոնք, սակայն, եթե տարեսկզբին դրսևորվում են որպես աճն արագացնող գործոններ, հետագայում կարող են վերածվել տնտեսական աճը նվազեցնող գործոնների: Այսպես, տարեսկզբին գրանցվել է տնտեսական աճի բարձր տեմպեր, քանի որ նախորդ տարվա նույն ժամանակահատվածում ՀՀ տնտեսության վրա արտաքին շուկի դրական ազդեցությունները դեռևս նկատելի չէին: Մինչդեռ հետագա ամիսներին, երբ համեմատվող ժամանակահատվածում առկա կլինի շուկերի էֆեկտները (բազայի էֆեկտը), կարելի է սպասել աճի տեմպի դանդաղում:

Ընթացիկ տարվա ապրիլին դեռևս շարունակվում են տնտեսական ակտիվության աճի բարձր տեմպերը, սակայն արդեն իսկ նկատվում է որոշակի դանդաղում: Մասնավորապես, ապրիլի տնտեսական ակտիվության ցուցանիշը (ՏԱՑ-ը) կազմել է 12.1%՝ նախորդ ամսվա համեմատ դանդաղելով 1.9 տոկոսային կետով, այն դեպքում, երբ նախորդ տարվա ապրիլին ՏԱՑ-ը արագացել էր 2.0 տոկոսային կետով՝ պայմանավորված արտաքին շուկի դրական ազդեցություններով: Հունվար-ապրիլ ամիսներին ՏԱՑ-ի ցուցանիշը կայունացել է՝ կազմելով 12.2%՝ նախորդ ամսվա նույն ցուցանիշի համեմատ մնալով անփոփոխ:


Գծապատկեր 1. Տնտեսական ակտիվության ցուցանիշը, կուտակային, %



2023թ. հունվար-ապրիլ ամիսների ՏԱՑ-ի աճը հիմնականում պայմանավորված է եղել առևտրի և ծառայությունների աճերով, որոնց նպաստումներն ընդհանուր ՏԱՑ-ի աճին կազմել են 9.1 և 5.1 տոկոսային կետ: Շինարարության ճյուղն էականորեն ավելի փոքր նպաստում է ունեցել՝ շուրջ 0.8


տոկոսային կետ, իսկ արդյունաբերության նպաստումը դանդաղել է նախորդ ամսվա համեմատ՝ կազմելով 0.6 տոկոսային կետ:

Գծապատկեր 2. Տնտեսական ակտիվության ցուցանիշը և ճյուղերի նպաստումները 2023թ. հունվար-ապրիլ ամիսներին, տոկոսային կետ



1.1. Արդյունաբերություն

Գծապատկեր 3. Արդյունաբերության համախառն թողարկման իրական կուտակային աճը, %




Արդյունաբերության ոլորտի զարգացումները շարունակում են մտահոգիչ մնալ: Մարտի կտրուկ աճից հետո (որը հիմնականում պայմանավորված էր նախորդ տարվա ցածր բազայի ազդեցությամբ), ապրիլին արդյունաբերության աճի տեմպն էականորեն դանդաղել է՝ տեղափոխվելով բացասական տիրույթ և կազմելով -0.8%: Արդյունքում հունվար-ապրիլ ամիսներին արդյունաբերության աճի տեմպը նույնպես դանդաղել է՝ կազմելով 2.4%:

Արդյունաբերության հունվար-մարտ¹ ամիսների 3.6% աճը հիմնականում պայմանավորված է եղել մշակող արդյունաբերության շուրջ 8.1% աճով, որի նպաստումը կազմել է 4.5 տոկոսային կետ: Հանքարդյունաբերության ոլորտում հունվար-մարտ ամիսներին շարունակվել են անկման միտումները, որի չափը կազմել է 3.2% և ընդհանուր արդյունաբերության աճին հակազդել է 0.8 տոկոսային կետով: «Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում» ոլորտում գրանցվել է անկում, ինչն ընդհանուր արդյունաբերության աճին ունեցել է 0.1 տոկոսային կետով բացասական նպաստում, իսկ «ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում» ոլորտում գրանցվել է 9.6% աճ՝ արդյունաբերության աճին նպաստելով 0.1 տոկոսային կետով:

1.2. Շինարարություն

Գծապատկեր 4. Շինարարության իրական կուտակային աճը, %




Շինարարության ոլորտում աճի տեմպը շարունակել է արագանալ: Շինարարության աճն ընթացիկ տարվա ապրիլին կազմել է 19.3%՝ նախորդ ամսվա համեմատ արագանալով 0.3 տոկոսային կետով, ինչի հաշվին հունվար-ապրիլ ամիսներին կուտակային աճը ևս արագացել է՝ կազմելով 16.8%:

¹ Արդյունաբերության ապրիլ ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

1.3. Ծառայություններ

Գծապատկեր 5. Ծառայությունների իրական կուտակային աճը, %




Ծառայությունների ոլորտի աճը որոշակիորեն դանդաղել է վերջին ամիսներին, սակայն պահպանվում է բարձր մակարդակում: Ծառայությունների ոլորտում ապրիլին գրանցվել է բավական բարձր՝ 20.4% աճ (պայմանավորված ՌԴ-ից մարդկանց և կապիտալի ներհոսքի կտրուկ աճի ազդեցությունների պահպանմամբ), որը սակայն նվազել է նախորդ ամսվա համեմատ շուրջ 1.5 տոկոսային կետով: Կուտակային աճը նույնպես դանդաղել է՝ հունվար-ապրիլին կազմելով 22.2% և նախորդ ամսվա համեմատ դանդաղելով 0.7 տոկոսային կետով:

Ծառայությունների ոլորտում, ըստ հունվար-մարտ ամիսների տվյալների², բարձր աճին մեծամասամբ՝ 10.0 տոկոսային կետով, նպաստել է «տեղեկատվություն և կապ» ենթաոլորտի շուրջ 54.3% աճը: Էական նպաստում են ունեցել նաև «ֆինանսական և ապահովագրական գործունեության», «տրանսպորտի» և «կազմակերպություն և հանրային սնունդ» ենթաոլորտների աճերը, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար 5.0, 4.0 և 2.3 տոկոսային կետ:

² Ծառայությունների ոլորտի ապրիլ ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

1.4. Առևտուր


Գծապատկեր 6. Առևտրի ծավալների իրական կուտակային աճը, %



Առևտրի աճի տեմպերը շարունակել են արագանալ: Արտաքին զարգացումների դրական տնտեսական հետևանքներն առևտրի վրա շարունակում են պահպանվել, ինչի արդյունքում ապրիլին առևտրի ոլորտում գրանցվել է 28.9% աճ՝ նախորդ ամսվա համեմատ արագանալով 2.8 տոկոսային կետով: Արդյունքում հունվար-ապրիլ ամիսների աճը նույնպես արագացել է՝ կազմելով 23.2%:

2. ԱՐՏԱԲԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ

Գծապատկեր 7. Արտահանման կուտակային աճ³, %




Արտահանման աճի տեմպը զգալիորեն դանդաղել է՝ արտացոլելով բազայի էֆեկտի ազդեցությունները: Ինչպես և սպասվում էր, այն ամիսների

³ Արտահանման նախորդ ամիսների ցուցանիշները վերանայվել են ՀՀ ՎԿ կողմից, ինչի արդյունքում աճի տեմպերը նվազել են նախկինում հրապարակվածի համեմատ:

համեմատ, որոնցում նախորդ տարի գրանցվել է արտաքին շուկի դրական ազդեցությունները, ընթացիկ տարում արձանագրվում է աճի տեմպի դանդաղում: Այսպես, 2022թ. ապրիլին արտահանման աճն արագացել էր շուրջ 16.6 տոկոսային կետով, իսկ 2023թ. ապրիլին դանդաղել է շուրջ 88.5 տոկոսային կետով: Կուտակային աճի տեմպը նույնպես դանդաղել է՝ հունվար-մարտի 120.7%-ից դառնալով 109.3%:

2023թ. հունվար-մարտ ամիսների⁴ արտահանման աճը հիմնականում պայմանավորված է եղել «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր», «մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ» և «վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ» ապրանքախմբերի համապատասխանաբար 4.0, 16.9 և 25.3 անգամ աճերով, որոնց նպաստումներն ընդհանուր արտահանմանը կազմել են 39.1, 34.7 և 23.9 տոկոսային կետ:

Գծապատկեր 8. Ներմուծման կուտակային աճ⁵, %



Ներմուծման աճի տեմպը նույնպես էականորեն դանդաղել է: Ներմուծման ծավալները 2023թ. ապրիլին աճել են շուրջ 84.7%-ով, այն դեպքում, երբ նախորդ ամսվա աճը կազմել էր շուրջ 2.5 անգամ: Սակայն, ի տարբերություն արտահանման, այստեղ չկա բազայի ազդեցությունը (քանի որ նախորդ տարվա նույն ամիսներին աճի էական փոփոխություն տեղի չէր ունեցել):

Ներմուծման աճը 2023թ. հունվար-մարտ ամիսներին⁶ հիմնականում պայմանավորված է եղել «վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ» և «մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ» ապրանքախմբերի

⁴ Արտաքին առևտրի ապրիլ ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

⁵ Ներմուծման նախորդ ամիսների ցուցանիշները վերանայվել են ՀՀ ՎԿ կողմից, ինչի արդյունքում ներմուծման աճի տեմպերն արագացել են նախկինում հրապարակվածի համեմատ:

⁶ Արտաքին առևտրի ապրիլ ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

ներմուծման բարձր աճերով, որոնք ընդհանուր ներմուծման աճին նպաստել են 29.8 և 27.1 տոկոսային կետով: Այս նույն ապրանքները նաև նպաստել էին արտահանման աճին, ինչը խոսում է վերարտահանման երկույթի շարունակության մասին:


3. ԱՇԽԱՏԱՎԱՐԶ⁷

Անվանական աշխատավարձի աճի տեմպը բավական բարձր է: Միջին ամսական անվանական աշխատավարձն ընդհանուր տնտեսությունում 2023 թվականի հունվար-մարտ ամիսներին նախորդ տարվա նույն ամիսների համեմատ աճել է 22.9%-ով՝ կազմելով 261,495.0 դրամ: Ոչ պետական հատվածում միջին ամսական անվանական աշխատավարձն աճել է 26.7%-ով՝ կազմելով 292,048.0 դրամ: Սակայն պետական հատվածում միջին աշխատավարձն աճել է զգալիորեն ավելի ցածր՝ 9.1% տեմպով և կազմել 189,509.0 դրամ:

Աշխատավարձերի աճին զուգահեռ՝ 2023թ. բավական բարձր է նաև գնաճը, որը հունվար-մարտ ամիսներին կազմել է 7.2%: Այդ պայմաններում, իրական աշխատավարձի աճը եղել է զգալիորեն ավելի ցածր՝ ընդհանուր տնտեսությունում 14.6%, ոչ պետական հատվածում՝ 18.2%, իսկ պետական հատվածում՝ 1.8%: Ինչպես նշել ենք նախորդ վերլուծություններում, պետական հատվածում իրական աշխատավարձերի ցածր աճը բավական խնդրահարույց երևույթ է, քանի որ աշխատողների զգալի հատվածի համար կենսամակարդակի էական փոփոխություն տեղի չի ունենում:


⁷ Աշխատավարձի ցուցանիշը հաշվարկվում է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացվող (հաշվետու ամսվան հաջորդող 25/26-րդ օրը) եկամտային հարկի և սոցիալական վճարի հաշվառման տվյալների բազայի հիման վրա և հրապարակվում է ՀՀ ՎԿ կողմից՝ յուրաքանչյուր ամսվա վերջին աշխատանքային օրը: Հետևաբար, ապրիլ ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:


Գծապատկեր 9. Միջին ամսական անվանական աշխատավարձի աճը 2022-2023թթ. հունվար-մարտին, %



4. ՓՈԽԱՐԺԵՔ

Գծապատկեր 10. Անվանական փոխարժեքի միտումները, կուտակային աճը (% , աճը նշանակում է ՀՀ դրամի արժևորում) և միջին ամսական անվանական փոխարժեքը (դրամ)





ՀՀ դրամը հիմնական արժույթների նկատմամբ շարունակում է մնալ էապես արժևորված: Հունվար-ապրիլ ամիսների ՀՀ դրամի միջին փոխարժեքն ԱՄՆ դոլարի նկատմամբ արժևորվել է շուրջ 23.3%-ով, եվրոյի նկատմամբ՝ 27.1%-ով, իսկ ՌԴ ռուբլու նկատմամբ՝ 11.7%-ով: ՌԴ ռուբլու նկատմամբ ՀՀ դրամի արժևորման տեմպը արագացել է, ինչը կարող է լրացուցիչ բացասական ազդեցություն ունենալ ՌԴ-ում ՀՀ ապրանքների մրցունակության և դեպի ՌԴ ՀՀ արտադրության ապրանքների արտահանման ծավալների վրա:

5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ⁸

5.1. Պետական պարտք


2023թ. ապրիլին ՀՀ պետական պարտքի ԱՄՆ դոլարով արտահայտված ծավալն աճել է 16.1%-ով, իսկ դրամով արտահայտված ծավալը նվազել է 0.9%-ով: Կառավարության պարտքը նույն միտումներն է ունեցել՝ դոլարային արտահայտությամբ աճել է 16.1%-ով, իսկ դրամային արտահայտությամբ նվազել է 0.9%-ով: Այդպիսի զարգացումների հիմնական պատճառը ՀՀ դրամի արժևորումն է: Հետևաբար, առավել ճիշտ կլինի դիտարկել դրամով արտահայտված ներքին պարտքը, որն ապրիլին՝ նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճել է 32.5%-ով, և դոլարային արտահայտությամբ արտաքին պարտքը, որը նվազել է 2.8%-ով: Ներքին պարտքի կշիռը ընդհանուր պարտքի պորտֆելում շարունակել է աճել՝ ապրիլի վերջի դրությամբ հասնելով 43.6%-ի:

2023թ. ապրիլին պետական պարտատոմսերի տոկոսադրույքները շարունակել են մնալ բարձր մակարդակում: Կարճաժամկետ պարտատոմսերի տոկոսադրույքը (եկամտաբերությունը) 2023թ. ապրիլին նախորդ տարվա նույն

⁸ Հարկաբյուջետային հատվածի՝ մասնավորապես պետական բյուջեի ցուցանիշների վերաբերյալ վիճակագրական տվյալները դեռևս չեն հրապարակվել:

ամսվա համեմատ բարձր է եղել շուրջ 1.2 տոկոսային կետով, իսկ երկարաժամկետ պարտատոմսերինը՝ 0.2 տոկոսային կետով:


Գծապատկեր 11. ՀՀ կառավարության պարտքի (ԱՄՆ դոլարով) 12-ամսյա աճը, %



6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

6.1. Գնաճ


Գծապատկեր 12. 12-ամսյա գնաճ, %



2023թ. ապրիլին գնաճը շարունակել է նվազել արագ տեմպով՝ ձևավորվելով բավական ցածր մակարդակում: 2023թ. ապրիլին 12-ամսյա գնաճը կազմել է 3.2%՝ նախորդ ամսվա համեմատ դանդաղելով 2.2 տոկոսային կետով: ՀՀ ԿԲ-ն վերաֆինանսավորման տոկոսադրույքը հունվար-ապրիլ ամիսներին չի բարձրացրել՝ թողնելով նույն մակարդակում:


6.2. Ավանդներ

Գծապատկեր 13. Ավանդների 12-ամսյա աճը, %



2023թ. ապրիլին առևտրային բանկերի կողմից ներգրավված ավանդների բարձր աճի տեմպն ավելի է արագացել: 2023թ. ապրիլի վերջի դրությամբ ավանդների ընդհանուր ծավալը նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ աճել է 31.2%-ով՝ մարտի համեմատ արագանալով 3.4 տոկոսային կետով: Ավանդների ծավալի բարձր աճը պայմանավորված է ինչպես ռեզիդենտների, այնպես էլ ոչ ռեզիդենտների ավանդների աճերով, սակայն վերջիններիս աճի տեմպն էականորեն բարձր է և կազմում է շուրջ 58.1%:

Գծապատկեր 14. Տնտեսության հատվածների նպաստումներն ավանդների աճին, տոկոսային կետ




Ավանդների աճին ոչ ռեզիդենտների ավանդների աճը նպաստել է շուրջ 12.3 տոկոսային կետով: Ռեզիդենտների ավանդների շարքում ավանդների աճին էական նպաստում են ունեցել տնային տնտեսություններից և ձեռնարկություններից ներգրավված ավանդների աճերը՝ համապատասխանաբար 10.2 և 7.1 տոկոսային կետով:

6.3. Վարկեր


Վարկերի ծավալների աճի տեմպը նույնպես արագացել է, սակայն եղել է ավանդների համեմատ ավելի համեստ չափի: ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին և ոչ ռեզիդենտներին տրամադրված ընդհանուր վարկերի (արտարժույթով և ՀՀ դրամով) ծավալը 2023թ. ապրիլին նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճել է 9.2%-ով, իսկ 2022թ. դեկտեմբերի համեմատ՝ 4.8%-ով:

Գծապատկեր 15. Վարկերի 12-ամսյա աճերն ըստ վարկառուների ռեզիդենտության, %




Վարկերի աճը հիմնականում տեղի է ունեցել ռեզիդենտներին տրամադրված վարկերի 9.4% աճի հաշվին, որն ընդհանուր վարկերի աճին նպաստել է 8.9 տոկոսային կետով: Ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերի ծավալների աճը կազմել է 5.8%՝ ընդհանուր վարկերի աճին նպաստելով 0.3 տոկոսային կետով:

Գծապատկեր 16. Ռեզիդենտներին տրված վարկերի 12-ամսյա աճը, %



Ռեզիդենտներին տրամադրված վարկերի ծավալների աճը հիմնականում պայմանավորված է տնային տնտեսությունների վարկերի շուրջ 18.1% աճով: Իրավաբանական անձանց տրամադրված վարկերի ծավալի աճը ապրիլ ամսից մուտք է գործել դրական տիրույթ՝ կազմելով 1.6%:

Գծապատկեր 17. Տնտեսության ճյուղերի նպաստումները ռեզիդենտներին տրամադրված վարկերի աճին, տոկոսային կետ




Ռեզիդենտների⁹ շարքում վարկերի աճին դրական նպաստում են ունեցել հիմնականում հիպոթեքային վարկերը, որոնց աճը կազմել է 30.3%, իսկ

⁹ Վարկերի վերաբերյալ վիճակագրական տվյալները ներկայացվում են ինչպես ոլորտային դասակարգմամբ, այնպես էլ ըստ ռեզիդենտության և տնտեսության հատվածների դասակարգման: Տարբեր դասակարգումներով ներկայացվող տվյալները տարբերվում են

նպաստման չափը՝ 5.5 տոկոսային կետ: Վարկերի աճին էական նպաստում է ունեցել նաև սպառողական վարկերի 13.4% աճը՝ ունենալով 2.9 տոկոսային կետ նպաստում: Շինարարության, ծառայությունների և գյուղատնտեսության ոլորտներին տրամադրվող վարկերի ծավալները նույնպես աճել են՝ ընդհանուր վարկերին ունենալով փոքր չափով դրական նպաստում: Արդյունաբերության ոլորտին տրամադրվող վարկերի ծավալը նվազել է 9.2%-ով՝ ընդհանուր վարկերի ծավալին ունենալով 1.2 տոկոսային կետով բացասական նպաստում: Վերջինս նույնպես արտացոլում է արդյունաբերության ոլորտում առկա խնդիրները:

6.4. Դրամական փոխանցումներ

Գծապատկեր 18. ՀՀ բանկերի միջոցով իրականացվող դրամական փոխանցումների զուտ ներհոսքը¹⁰



Արտերկրից դեպի ՀՀ փոխանցվող դրամական միջոցների զուտ ներհոսքը կտրուկ կրճատվել է: 2023թ. մարտին բանկային համակարգի միջոցով դեպի Հայաստան փոխանցված գումարների զուտ ներհոսքը (ներհոսքի և արտահոսքի տարբերությունը) կազմել է 50.9 մլն ԱՄՆ դոլար՝ էապես ցածր լինելով ինչպես նախորդ ամիսների, այնպես էլ նախորդ տարվա նույն ամսվա ցուցանիշներից: Հատկանշական է, որ զուտ ներհոսքի կրճատումը տեղի է ունեցել ոչ թե ներհոսքի կրճատման, այլ արտահոսքի կտրուկ ավելացման հետևանքով: Վերջինիս ծավալը մարտին կազմել է 431.6 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ ամսվա համեմատ աճելով 13%-ով, իսկ նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ՝ 2.7 անգամ:

միմյանցից, ինչը բացատրվում է ՀՀ ԿԲ կողմից տեղեկատվության հավաքագրման տարբերություններով և չի մանրամասնվում:

¹⁰ Ներկայացված է ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից մուտք եղած և ՀՀ-ից ֆիզիկական անձանց կողմից արտերկրի կատարված ընդամենը ամսական փոխանցումների տարբերությունը՝ ԱՄՆ դոլարով:

7. ԱՄՓՈՓՈՒՄ

1. 2023թ. բարձր տնտեսական աճի հիմքում ընկած բազայի էֆեկտը աստիճանաբար չեզոքանում է, ինչի արդյունքում տնտեսական աճի տեմպերը աստիճանաբար կնվազեն: Ընթացիկ տարվա առաջին ամիսները համեմատելով նախորդ տարվա համապատասխան ամիսների հետ, երբ դեռևս տնտեսական ցուցանիշներում չէին արտացոլվել արտաքին շուկի դրական ազդեցությունները, ստացվում են բարձր աճեր, սակայն ապրիլին ՏԱՑ-ը դանդաղել է, քանի որ նախորդ տարվա ապրիլի ցուցանիշն արդեն իսկ որոշակիորեն պարունակում է շուկերի ազդեցությունները: Մասնավորապես, ապրիլի տնտեսական ակտիվության ցուցանիշը (ՏԱՑ-ը) կազմել է 12.1%՝ նախորդ ամսվա համեմատ դանդաղելով 1.9 տոկոսային կետով, այն դեպքում, երբ նախորդ տարվա ապրիլին ՏԱՑ-ը արագացել էր 2.0 տոկոսային կետով: Հաջորդ ամիսներին կարելի է ակնկալել, որ ՏԱՑ-ի տեմպը կշարունակի դանդաղել՝ արտացոլելով բազայի էֆեկտի չեզոքացումը:

2. Արդյունաբերության ոլորտի զարգացումները շարունակում են մտահոգության տեղիք տալ: Մարտ ամսին արդյունաբերության աճը կտրուկ արագացավ, ինչը կապված է նախորդ տարվա նույն ամսում արդյունաբերության աճի անկման հետ: Հետևաբար, սպասելի էր, որ ապրիլին արդյունաբերության աճի տեմպը որոշակիորեն պետք է նվազի: Սակայն, փաստացի ընթացիկ տարվա ապրիլին գրանցվել է արդյունաբերության անկում՝ 0.8 տոկոսի չափով: Արդյունաբերության նման զարգացումները մտահոգիչ են, քանի որ դրանք կարող են հանգեցնել տնտեսության կառուցվածքի վատթարացմանը և ներուժային աճի դանդաղմանը:

3. Գնաճի տեմպն էականորեն նվազել է՝ մոտենալով գնաճի թիրախային միջակայքի ստորին սահմանին: Դեռևս 2 ամիս առաջ ՀՀ-ում գների աճի տեմպն էականորեն գերազանցում էր ԿԲ թիրախը, սակայն մարտ և ապրիլ ամիսներին գրանցվել է գնաճի էական դանդաղում: Ընդ որում, ընթացիկ տարվա սկզբից ՀՀ ԿԲ-ն վերաֆինանսավորման տոկոսադրույքը պահպանել է նույն մակարդակում: Գնաճի տեմպի դանդաղումը, իհարկե, դրական երևույթ է, սակայն նվազման տեմպը պետք է լինի տնտեսական միջավայրին համահունչ:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերերը **«ԼՈՒՅՍ»** հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն **«ԼՈՒՅՍ հիմնադրամ»** գրառման և համապատասխան **ակտիվ հղման** տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: